

սրտով հայ մնացած եմ եւ պիտի մնամ: ուրիշ բան է՝ եթէ իրենց երկրին մէջ գտնուելով՝ իրենց լեզուին եւ գիտութեանց տեղեկութիւն առեր եմ եւ այդ բանին համար կարծեմ թէ գէշ բան մը ըրած չեմ:

— Եթէ այդ գիտութիւնքը քու ազգիդ օգտին ծառայեցնելու միտք ունիս՝ աստուած քեզ օրհնէ. մենք իրենց ուսմանց թշնամի չենք, բայց շատ ու շատ վարձ տուին մեզ իրենց վատութեան պատերազմի մէջ, եւ իրենց քաջութեան ժամանակ շատ վատ բան ըրին, երբ կրօնական խառնակութեամբք Յայաստանի ամէն տուն խռովեցին:

Եւ այս խօսքերը զրուցելուն Թեոդորոսի աչքերը սոսկալի փայլ մը առին եւ դառնալով Բագրատունի իշխանուհուն՝

— Այդ Զրիստափորը, որ ամէն հայոց նախարարք միաբանեցան, վար առին կաթողիկոսական աթոռէն, իբրեւ անդուռն բերան, իբրեւ զրպարտիչ, իբրեւ չարալեզու, սուրբ մ'եր, իսկ մենք յիրաւի արժանի պատիժը կրեցինք եւ կը կրենք այսօր կաթողիկոս մը ունենալով, որ երկիւղին եւ տգիտութեան կը զոհէ մինչեւ իր Լուսաւորիչը: Ասպետը, Տիկին, այս մարդն աթոռը գրաւ, ինք աքսոր գնաց, եւ ես միւսակ մնացի ամէն Յայաստանի մէջ՝ ուր եթէ քանի մը սիրտ ու գութ ունեցող մարդիկ գտնուէին, այս խեղճ հայրենիքը կարելի կը կենդանացնել: Թշուառութիւն ամէն կողմէն կը տեղա, արաբացիք՝ աստուածային Նոր պատուհաս՝ փոթորկի պէս զարկին՝ անցան գնացին. յոյնք վատ եւ ամբարտաւան իբրեւ ջախջախ եղեգ խորտակեցան. հիւսիսականաց կատաղութիւնն սանձելու համար հազիւ կը բաւեն Վիրք, Աղուանք եւ Սիւնիք, Արծրունիք եւ Անձեւացիք շփոթած հազիւ կը խոստանան երբեմն արեւելեան կողմը պաշտպանել, Մամիկոնեանք Մուշեղ եւ Յամազասպ տարտամ պատասխաններ կ'ուղարկեն իմ հրաւիրանցս, իսկ Մոկացունց նախարարն Արդուկ յայտնի համարձակ անամօթութեամբ առաջնորդ եղեր է արաբաց: Դուրսեն թշնամիք, աւարառութիւնդ, հուր, սուր, կործանմունք, ներսեն անհոգութիւն, թուլութիւն, հարստահարութիւն եւ մատնութիւն... ո՛ւմ դիմես եւ ուստի՝ յուսաս օգնութիւն: Աստուա՛ծ, կ'ըսեմ ես ինքնիրենս. բայց Զրիստոսի փոխանորդը՝ Յայոց կաթողիկոսը կը տեսնեմ թէ կայսրեն կը վախէ, իւր ժողովուրդէն կը վախէ. աթոռը թողած՝ Կարնոյ պարիսպներէն չհամարձակիր ելնելու. իմ հրաւերներուս իւր ծերութիւնը՝ հիւանդութիւնը ցոյց տալով կը պատասխանէ: Ահա վիճակը, իսկ դարմանը ուրտե՞ղ... չեմ տեսներ:

Այս խօսքերուն տխուր եւ երկար լռութիւն յաջորդեց. Թեոդորոս կը մտածեր, դառնութիւն երեսին վրայ էր նկարուած: Սարգիս իշխանը ծեր գինուոր իբր